*605. ԽԱՉՔԱՐ, փոքր, գեղաքանդակ, դրված է նոր գերեզմանի վրա. Թևերի շուրջը.*

: : : : : ՐՈՀԱՆԷՍ
ԲԼՌ | ՄՐ
Կ | ՄԱՐ
Գ

ԹՎ,ԻՆ, :ՌԿ: (1611). [ՏԷ]Ր ՈՀԱՆԷՍ. ՏՐ ՄԱՐԳ[Ա]Ր[Ը]:

## 63. ՏՈՂ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

*Հին ու նշանավոր է այս գյուղը, որ գտնվում է հինավուրց Քթիշ լեռան արևելյան փեշերին (լեռան գագաթին է Քթիշ բերդը)։ Գյուղն առավել անվանի դարձավ* XVIII *դարի սկզբներից, երբ այնտեղ հաստատվեց Մելիք Եգանը։*

*Գյուղում կան արձանագրություններ ունեցող հետևյալ հուշարձանները.*

Ա. Ս. Ստեփաննոս եկեղեցի. *գտնվում է գյուղի հյուսիսային եզրին՝ գերեզմանատան մեջ Թաղածածկ փոքր շենք է, կառուցված ճեղքված քարերով։ Անսովոր կերպով եկեղեցու մեջ կանգնած է մի մույթ, որը սրահը բաժանում է երկու մասի, ըստ որում հյուսիսային մասն ավելի նեղ է։ Այդ նեղ մասում հնում եղել են տապանաքարեր։ Եկեղեցու շինության ժամանակը հայտնի չէ, արևմտյան միակ մուտքի ճակատին գրված Մելիք Իսայու արձանագրությունը հաղորդում է 1747 թ. ծածկը նորոգելու մասին, բայց եկեղեցու պատերի մեջ ագուցված բազմաթիվ հին բեկորների վրա կան ավելի հին թվականներ. ամենահինը՝ 1421-ից։*

Բ. Գերեզմանատուն. *Ս. Ստեփաննոս եկեղեցին շրջապատում է երեք կողմից, որի մեջ ցաք ու ցրիվ ընկած են խաչքարերի բեկորներ, իսկ տապանաքարերի մեծ մասը անգիր է. մի քանիսի վրա կան կենցաղային քանդակներ։*

Գ. Անապատ. *գտնվում է Ս. Ստեփաննոսից մոտ 150 մետր արևմուտք, թեք լանջի վրա. փոքր թաղածածկ շենք է, այժմ կիսավեր, շրջապատում կան խուցերի ավերակներ, այստեղ միայն մի արձանագրություն է եղել նախկինում, որից կարելի է կռահել, որ եկեղեցին կոչվել է* ս. Վարդան: *Անցյալում եղել է կույսերի անապատ, որը հաստատվում է նաև № 643 արձանագրությամբ։*

Դ. Մելիք Եգանի ապարանք. *գտնվում է գյուղի կենտրոնում, հնում ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ է պահպանված՝ դարպասի հետ միասին։ Շինված է սրբատաշ քարով, երկհարկանի է, ներքին հարկը քարածածկ. վերին հարկն ունի պատշգամբներ։*

*Գյուղը այժմ էլ շեն է և բնակելի։ Ապարանքի ներքին հարկի գեղեցիկ ձևավորված մուտքի շուրջը փորագրված է Մելիք Եգանի ընդարձակ հիշատակագրությունը, տեղական բարբառով և բովանդակալից։*

Ե. Ս. Հովհաննես եկեղեցի. *գտնվում է գյուղի մեջ, բարձրադիր թաղում. շինված է սրբատաշ քարերով, չորս սյուների վրա և թաղածածկ շենք է. շինված է համարվում Մելիք Եգանի կողմից, բայց հավանաբար հնի տեղում։ Եղել է Մելիք Եգանյանների տոհմական տապանատունը։ Եկեղեցին բաց անելու և արձանագրությունները ստուգելու հնարավորություն չունեցանք, առնում ենք նախորդ հրատարակություններից։*

Զ. Անհայտ հուշարձան. *Տող գյուղից Ֆիզուլի քաղաքը (Կարյագինո) տանող ճանապարհի ձախ եզրին բարձրացող բլրի գլխի հուշարձան։*

*Ժողովածուի մեջ գյուղի և շրջակայքի հուշարձաններից հավաքված են 36 արձանագրություն, որոնցից 27-ը հրատարակում ենք առաջին անգամ։*

*Որպես հավելված բերում ենք նաև մասունքների վրա եղած արձանագրությունները։*

### Ս. Ստեփաննոս

*Եկեղեցու շինության և նորոգումների ժամանակ, նույնպես և հետագայում՝ պատերի մեջ ագուցված են հին խաչքարեր և տապանաքարեր՝ մանր հիշատակագրություններով. այդպի-*

*սիներն արվել են նաև երեսպատման քարերի վրա։ Ահա դրանք ժամանակագրական կարգով և առանց տեղադրությունը նշելու*

*606*. . . . . . . . Թվ.˻ԻՆ˼ :ՊՀ: (1421): 

*607*. Թվ.˻ԻՆ˼| :ՋՁ: (1531). |ԵՍ ՏՐ. ԴԱՆԻ[Է]Լ ԿԱ˼Ն˻Կ˼ՆԵՑ˻ՈՒ˼ՑԻ.





*608*. Խ˻Ա˼ՉՍ| ԻՍԿ˻Ա˼ՆԴԱՐԻՆ.



*609*. ԵՍ ԱՎԱՆԷՍ.



*610*. ՆԱՉԱՂԱՑ



*611*. ԽԱՉՍ ԱՂ˻Ա˼ՄԻՐ˻ԻՆ˼.



*612*. ՔԱ.| ՑԻՇԷ| ՏՐ. Կ˻ԻՐ˼Ա˼Կ˻Ո˼Ս˻ԻՆ˼.



*613*. ՊԵՏՐՈՍ, |ՇԱՀՈՒՄ.



*614*. ԳՈՒԼՈՒ|ՋԱՄԱՆ.



*615*. ՏՐ. ԿՈՒՍՏ˻ԱՆԴ˼|. ՏՐ. ՌՎԱՆԷՍ.



616. ՄՈՒ|ՏԱՄ,| ԱՂԱ|ՄԻՐ.



617. ՃԱՆԱՊԱՑ.



618. ՆԱՊՆ|ԱՊԱ



619. ՄԱԼՔՈՒՄ.



620. ԵՍ ՄԱԽՏՈՒ . . . |ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.



621. ՍԱՐԳԻՍԻՆ| ԽԱՉՍ|. ԳՈՒ|ԼԱՊ|ԱՑ.



622. ԽՈՒԴԱՇ . . | ԳՈԼԱՊԱՑ.



623. ՄԱՆՈՒԷԼ ԷՊԻՍԿՈՊՈՍ.

Հրատ. Բարխուդարեանց, 77։



624. ՈՎԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Հրատ. Բարխուդարեանց, 77։



625. Ի ԹՎԻՆ



626. . . . :ՌՃԻԴ: (1675) ՅԻՇԵՑԷՔ.

*627.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *երեսին ուրագ, մկրատ և խաչեր, ագուցված է արև-մըտյան պատին, արտաքուստ. 4 տող՝*

ԵՍՙՅԼՙՀ
ԴՙԴ
ԿՙՆԿԵՑԻԽՙՆՍՅԻՂ
ՙԿՙՐԻՆՍՙԹԻԼՄԻՂԻՆ

ԵՍ ԱՑԼԱՀ|ԴԱԴ| ԿԱՆԿ[Ն]ՅԵՑԻ ԽԱՉՍ ՅԻՇ[ԱՏ]ԱԿ ԱՊԻՆ, ՍԱԹԻԼՄԻՇԻՆ:

Ծանոթ. *Հաղվագյուտ է Ա տառի մեկ գծով գրությունը։ Հավանաբար XVII դար։*

*628.* ***Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ*** *արևմտյան մուտքի ճակատաքարի վրա. 6 տող.*

Թ:ՌՃՂՋ
ՅԻՇԱՏԱԿԷՄՐՍ
ՏԵՓԱՆՈՍԵԿԵՂԵՑ
ՌՍԳԼՈՒԽՆՈՐՆՈՐՈԳԵ
ԱՑՄԵԼԻՔԵԿԱՆՈՐԴԻՄԵԼ
ԻՔԻՍԱՅԻՆ

ԹՎԻՆ :ՌՃՂՋ: (1747). ՅԻՇԱՏԱԿ Է ՄՐ. Ը[Ս]ՏԵՓԱ-ՆՈՍԻ ԵԿԵՂԵՑ|ՈՒՍ ԳԼՈՒԽՆ, ՈՐ ՆՈՐՈԳԵ|ԱՑ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԻ ՈՐԴԻ ՄԵԼ|ԻՔ ԻՍԱՅԻՆ. ՙՅԻՇԱՏԱԿ Է ՀՈԳՈՅՙ:

Ծանոթ. *Վերջին երեք բառերը ջարդոտված են այժմ. լրացնում ենք Բարխուդարյանցից։*

*Հրատ. Բարխուդարեանց, 77։*

*629.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *գտնվում է Ս. Ստեփանոսի հյուսիսարևմտյան մասում, գերեզմանատան մեջ. հարավային երեսին՝ ոչխար, ուրագ, մկրատ, աքցան.*

ՌԵՍՏԱՅԵՀԱՆԷՍ
Թ ՋՂԴ

ՌՒՍՏԱՑ ԵՀԱՆԷՍ| ԹՎ[Ի]Ն[Ս] :ՋՂԴ: (1545):

*630.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *կես, ընկած է Ս. Ստեփանոսի մուտքի մոտ. 3 տող.*

ԱՅՍԷՏԱՊԱՆԿՈՃ
ՕՎԱՆԷՍԻՈՐԴԻՏՐ
ԲԱՐՍՍԷՂԻՆԹՈՙՙՙ..

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿՈՃ| ՕՎԱՆԷՍԻ ՈՐԴԻ ՏՐ. ԲԱՐՍ[Ս]-ԷՂԻՆ. ԹՌ . . . .

Ծանոթ. *Թվականի առաջին գիրը Ռ պիտի լիներ, հավանաբար նաև կոճ—գուցե խոճ—խոջա։*

*631.* ***ԱՆԱՊԱՏ*** *կոչվող եկեղեցու պատին, խաչի շուրջը՝*

խաչս վարդան:

Ծանոթ. *Ավանդաբար ասում են, որ այստեղ է թաղված Մելիք Բախտամը։*

*Հրատ. Բարխուդարեանց, 77։*

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԵՂՈՒՄ ՉԵՆՔ ՏԵՍԵԼ ԵՎ ԱՌՆՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻՑ

*632.* ***Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ*** *եկեղեցու մուտքի ճակատակալ քարին.*

Թվին :ՌՃՁԵ: (1736): Այս սուրբ Ոհանէս եկեղեցուս գլուխն նորոգեց Ղուկաս վարդապետի որդի Մէլիք Եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ. ով կարդայ մեկ բերան Աստուած ողորմի ասէ:

*Հրատ. Բարխուդարեանց, 74 (որից և առնում ենք), Ջալալեանց, II, 260 (չունի թվականը)։*

*633. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու քարե խաչկալի հյուսիսային դռան վրա.*

Որ ողորմի Քրիստոս Աստուած. յիշատակ է խաչկալս պարոն Մէլիք Եկանիս և ծնողաց իմոց Մօսէս, Ղուկաս վարդապետին, մօրն իւր Շհօին և ծնողին Մարիամին և եղբարն իմ Արամին և քոյրն իմ Խանում, կողակիցն Խանում աղին, որդի Արամին, Ըսայուն, Պաղտամին, Վեւտին, կողակիցն Գոզալին, դուստր Թավարին, խանպաճին, Խաքուն Խաթայուն. և այլն եղելոց ողորմի ասէք. ամէն թիվն :ՌՃԷ: (1658)

Ծանոթ. *Անշուշտ թվականի մեջ սխալ կա, բաց է թողնված տասնավորը:*

*Հրատ. Բարխուդարեանց, 74:*

Տապանագրեր, ս. Հովհաննես եկեղեցուն կից շինված Մելիքական տապանատան մեջ.

*634.* Այս է տապան Մելիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվին :ՌՃԿԴ: (1716):

*Հրատ. Բարխուդարեանց, 75:*

*635.* Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մէլիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգին
Քան զիշխանս Հայոց երկրին... :ՌՃՂԳ: (1744):

*Հրատ. Բարխուդարեանց, 75:*

*636.* Այս է տապան քաջ իշխանին
Մէլիք Եկանի որդի պարոն Մէլիք Արամին,
Որ շատ սիրական էր Նատիր շահին,
Որ յառաջ վախճանեցաւ հայր սորին,
Որ շափաղաթ ունէր Նատիր շահին,
Որ է :Բ: Հաքիմ էլաւ :Ե: Մուհալին.
Շահն ոզեց Արամ տարաւ,
:ՋՌ: (6000) թումանն ջարմայ առաւ,
Ուրախ ատով յղի արաւ,
Մէկ ամ կացաւ, վախճանեցաւ.
Ողորմի. թվին :ՌՃՂԴ: (1745).
Որ փոխեցաւ առ Աստուած,
Որ ընթեռնուք, մէկ բերան Աստուած ողորմի ասացէք:

*Հրատ. Բարխուդարեանց, 75—76: Ջալալեանց, II, 260 (թերի և աղավաղված):*

*637.* Ցայսմ տապանի հանգչի մարմին՝ քաջ և արի Մելիք Բախտամին. սա էր որդի Մէլիք Արամին. մահ և վախճան պատմեն սորին՝ մահադեղով Իբրահիմ խանին. և որք հանդիպիք ի տապան սորին, միով բանիւ ողորմի ասէք. ամէն:

*Հրատ. Րաֆֆի. Խամսայի մելիքությունները, 216:*

**638.** Այս է տապան մեծին Մէլիք Եկանի որդի Մէլիք Եսայուն, և էր սա իշխան կարգեալ Նաշիր շահէն. ՟ԼԳ՟ (33) ամ տիրեաց երկրիս Դիզակու և արար բազում քաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն. և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր. և թիւ կենաց նորա ՟ԿԱ՟ (61). ամաց, փոխեցաւ թվին ՟ՌՄԼ՟ (1781), հոգտեմբերին ՟Բ՟ (2)-ին երեքշաբթի. որ ընթեռնուք, մեկ հայր մեղայ ասացէք. ամէն:

*Հմտ. Բարխուդարեանց, 76։ Ջալալեանց, II, 260։ Րաֆֆի, Խամսայի մելիքութիւնները, էջ 103։*

**639.** Այս է տապան լուսահոգի Մէլիք Առամի որդի Բաղր բէկին. թվին ՟ՌՄԼԸ՟ էր. (1789):

*Հմտ. Բարխուդարեանց, 76։*

*Տող գյուղից Ծիղալի քաղաքը (Կարլագինո) տանող ճանապարհի ձախ եզրին բարձրանում է մի լանջանիստ և բարձր բլուր, որի գլխին պահպանվել է թաղածածկ և ամբողջական փոքր եկեղեցի. մուտքի բարավորին 5 տող.*

**640.**

ԹՆ ՌՃՂԱ
ՅԻՇԱՏԱԿԷՍԱՐՔԻՍԻ
Դ:·ԽՍՈՒՆ:·ՄՕՐՆ:·ՋՈԼԱԼԻՆ:·ԻԽ
ՊՕՐՆ ԿՈՂԱԿԻՑ ՅԵՐԻՔԱՋԻՆՈՐ
ԹՈՆՑՆԵԻԴՈՍՏԻԱՑ ԱԾՈՂՈՐՄ
ԳՐ ՈՐ

ԹՎ[Ի]Ն ՟ՌՃՂԱ՟ (1742). |ՅԻՇԱՏԱԿ Է ՍԱՐՔԻՍԻ| Ո[Ր]ԴԻ ԽՍՈՒՆ, ՄՕՐՆ ՋՈԼԱԼԻՆ, ԻԽ|ՊՕՐՆ ԿՈՂԱԿԻՑ ՅԵՐԻՔՆԱՋԻՆ, ՈՐ|ԹՈՆՑՆ ԵՒ ԴՈ[Ի]ՍՏԻՐԱՑ ԱԾ. ՈՂՈՐՄԻ.

Ծանոթ. *Վերջում եղած փակագիրն, անշուշտ, գրչի անունն է, հավանաբար* Գրիգոր:

**641.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, եկեղեցու հարավային պատի տակ. երեսին եղծված 2 տող.*

ԱՅՍԷՏԱՊԱՆՊԵՏՐՈՍ ՊԱՊԻՆ



ՈՐԷ ԱՒ ՐԵԻԻ ՌՎԱՐԱՐ
ԹՎԻՆ Ռ::ՂԸ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍ ՊԱՊԻՆ|ՈՐ Է · · · · · | ԹՎԻՆ ՟ՌՂԸ՟ (1649):

**642.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, ընկած է եկեղեցու ներսում. վրան 3 տող.*

ԱՅՍԷՏԱՊ
ԱՆՍՐԲՅԱԿ
ՈՎԻԿԱՅ

ԱՅՍ Է ՏԱՊ|ԱՆ Ս[ՈՒ]Ր[Բ] ՅԱԿ|ՈՎԻԿԱՅ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ս. Հովհաննես եկեղեցում եղած մասունքների վրա եղել են.

**643.** ***Ա. ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ** վրա՝*

Այս է մասունք և նշխարք սրբոյ Առաքելոյն Թօմայի և Յակովբայ զմահաս(?)

[1] *Ջալալյանցը հիշատակում է միայն, որ այստեղ կային Մելիք Եգանի տոհմից քաջ իշխան Օհան բէգի, Բալու բէգի, Բաղր բէգի, Յօսէփ բէգի, Բանկի բէգի, Եսայի բէգի և ուրիշների տապանաքարերը. Նշվ. հատորը, էջ 260։*

նահատակին. ես Շուքեցի Մարգարիտ ապաշխարողս ետու զայս նշխարս քեզ, ծերունի Սարգիս վարդապետիդ, յիշատակ հոգոյ. ի վայելումն յաւիտենական քո. թվ. ։Ճ։ (100).

Ծանոթ. *Անշուշտ սխալ է վերծանված թվականը. հավանաբար* ։ՌՃ։ *(1651)։ Սարգիս վարդապետը հիշատակված է 1657 թ. տե՛ս արձանագրություն 646։*

*Հրատ. Բարխուդարեանց, 74։*

***644. Բ. ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ վրա.***

Յիշատակ է Մէլիք Եգայի որդի Սափարի բէկին, որ ես Դոլա կուսանաց Անապատին. սա է Յակոբ հայրապետին և Թէոդորոսի մասունքն։

*Հրատ. Բարխուդարեանց, 74։*

***645. Գ. ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ վրա.***

Ես Գրիգոր շինել տվի խաչս յիշատակ ինձ առաջ անմահական է ի Քրիստոս Աստուած հաւատաց է սուրբ Ակոփիկ, որէ Դիզակ։ Հաքերքեցի ոսկերիչ Մուրատս շինեցի. թվին ։ՌՂ։ էր (1641)։

*Հրատ. Բարխուդարեանց, 75։*

***646. Գ. ԱՐԾԱԹՅԱ ԵՎ ՈՍԿԵԶՐԱԾ աջի վրա.***

Այս է աջն սրբոյն Բարսեղի հայրապետին Կեսարու, որ ես Սարգիս վարդապետս վերստին նորոգել տվի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց Օհանին և Եղիսապետին. ի դուռն սուրբ Աստվածածին. թվին ։ՌՃԶ։-ին (1657), այժմս ։ՌՃԾԲ։ (1703), ի գիւղն Կոլը։

*Հրատ. Բարխուդարեանց, 75։*

***647. ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ԱՊԱՐԱՆՔԻ ՄՈՒՏՔԻ ՇՈՒՐՋԸ կծապրության վրա դուրս արված պատավորությամբ.***

ԹԻՆ ՌՃԺԶ
ՅԻՇԱՏԱԿ ԷԹԱՆԱՊԱՅԱՍ
ԱՅՍ ԷՐԵՍ ՂՈՒԿԱՉՎԱԴԱՅԳԵՏԻՐԴ
ՐԷԻՄԱՆՌՆՄՔԵԿԱՆՐԱՌԱԶԵԻԽԷԼԽՆ ՉԱՄ
ԴԵՌԻՆՉԿԱՐՔԵՑԻՆՔՕԻՑՅԻԴՆՈՐԱՅ ՈՐՕԼՔԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԴՐԱԻԻՆՉ | ԱՅՍԵՋՄՈՀԻԼ | ԻՆՅԴ··· | ՂՍԼԴԵՌ | |
| ԽՍԱՉԿՔՐՍ | ԴԵՅՐՄԷԿՆՌ | ՎԱՎՍՕՎԼ | ՄՂԱԼՍՈ | |
| ԱԽՇՄԷԿՆՆ | ՄՅԳՌՄԷԿՆԽԱ | ՂՄԱՂԷՇԱ | ԼՌԱՆՀՌՍԷ | |
| ՉԱՆՄԷԿՆՎ | ՄՆԴԱՅՄԷԿՆՔ | ՀՆԱՅԴԻ | ՆԻՅՏՂԱ | |
| ՈՉԵՋՄ | ԷԿՆՏՌՉԱՂԱՅ | ՐՋՕՐԷՂ | ՅՂԱՀՌՄ | |
| ·ԴՌՆՑ | ԽԱՆԸՂԱԿԼՄԴ | ՌԱՔԱՐԵ | ԻՂԷՐԵՔՆ | ԻՅԵՌՆՐԱՅՆՏՆ |
| ԿԱՅՏԵՂ | ՄԻՆՋՇԱՓԱՅՂԱ | ԿՄՋՕՐՕՔ | ՐԻՑԻՆՆԱ | ՐԱՆԷԼԱՍՉԱՔՂ |
| ԹԱՄԱ | ՕՎՐՅԵԴՕՎԿՄ | ԱՌՄՕԼՔ | ՓՂՌԼՈՂԱՐ | ՌԼՌՂՄԿԷՐԴՐԵՆ |
| ԹԷԱՅՍԳԻՐԵՍ | ԻՄԱՆԱՅՐՄԵՐ | ԱՍԻՋԵՌԷ | ԷՐԴԻՐԱԻ | ԴԻԶԱԿ |
| ՐԴԻՍՌԹՌՆ | ԱՅՍԴԻՍԻԼԱԻՍԽՆ | ՍՕՍՄԱՆԼ | ԻՆՋՏՌՆՑԷ | |
| ՈՂՐՄԱԱՅ | ՍԷԵՂԵԻԱՄԷՆ | ՌԷՆԱՆԱՅ | ՍՄԷԼԻՔՌՌ | |
| | | ՆՐԱՅԷՍ | ՌՆԴՎԱՎԱ | ԵՍԹՈՂԵՑ ԻՌՂ |
| | | ՂԱՓՂՌԼ | ՅԼՕՍՍԱ | ՀԱՅԱՍԴԱ ՆԱՍ |
| | | ՈՂԱՐԿԷՐ | ՆԼՌՆԵԿԱ | ԵՍԻՐԳԱԼՈՒ |
| | | | ՎԱՌԱՎ | |

ԹՎԻՆ :ՌՃԺԶ: (1667). ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱՆԱՊԱՏՍ ԱՅՍ Է ՈՐ ԵՍ ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՐԴԻ, ՈՐ Է ԻՄ ԱՆՈՒՆ ՄԷԼԻՔ ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱՋ ԵՒ ԽԵԼԽՆ ՋԱՄ ԴԵՌ ԻՆՁ ԿԱՐՔԵՑԻՆ ՔՕԽՎԱՅՑ, ՑԻԴ ՆՈՐԱՑ ՈՐ ՕՂՔԱՆԻՆ . . . . ԴԵՌ ԱԻԳԱԼ ՍՈՂԹԱՆ ՀՈՒՍԷՄԻՆԻՑ ՏԳԱՑ ԳԱՀԹՄԻԳ ԷՐԵՔՆ ՈՐ Ի ՑԻՆՁԱՓ ՎՈՒՎ ՈԳԱՐԿԷ. ՈՐ ՊԻՐԱԻ ԻՆՁ ՏՈՒՆ . . . . ՄԷԼԻՔՈՒԹՈՒՆ ԴՎԱՎ: ԱՑԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՌԱՎ Ի ՁԵՌ ՆՈՐԱՑՆԻՑՆ. ՈՐ ԱՆ ԷԼ ԱՍՁԱՓ ԳՈՒՎ ՈՒԳԱՐԿԷ ՈՐ ՊԻՐԵՆ ԴԻՋԱԿ. ԻՆՁ Դ . . ՎԱՎ ՍՕՎԼԳԱՐ ԱԳԷ: ՇԱՀ ՆԱՑԴԻՐ ՋՕՐԷԳ ԹԱՔԱՈՐ ՆԿԱԻ ՋՕՐՕՔ, ԱՌԱԻ ՕՂՔԱՍ Ի ՁԵՌԷՍ ՕՍՄԱՆԼՈՒԷՆ ԱՆԱՑ, ՆՈՐԱՑ ԷՍՁԱՓ ԳՈՒՎ ՈԳԱՐԿԷ ՈՐ ԴՐԱԻ ԻՆՁ. ԱՅՍ ԵՐ ՋՄՈՀԻՎԻՍ. ԱՋԿ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԴԵՑ ՈՐ ՄԷԿՆ ԹԱԼԻՇ, ՄԷԿՆ ՁԱՐԱՅՑՊԵՐԹ, ՄԷԿՆ ԽԱՉԱՆ, ՄԷԿՆ ՎԱՐԱՆԴԱՑ, ՄԷԿՆ ՔՈՉԵՋ, ՄԷԿՆ ՏՈՒՋԱԳ. ԱՑՍԴՈՒՆՑ ԽԱՆԸ ՊԱԿԼԱՐՊԷԿԱՑ ՏԵԳ ԱՐ ԻՆՁ ՇԱՓԼՑԳԱԹ ԱՐԱԻ: ՕՎ ՈՐ ՑԵԴՕՎ ԿԱՐԹԷ, ԱՅՍ ԴԻՐԵՍ ԻՄԱՆԱՑ ՈՐ ՄԵՐ ՈՐՊԷՍՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՊԷՍ ԻԼԱԻ. ՄԻՆ ՈԳՈՐՄԵԱ. ԱՅՍ Է ԵՂԵԻ ԱՄԷՆ:

ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՉ ՀԱՅԱՍՏԱՆԱՍ ԵՍԻՐ ԳԱԼՈՒ:

Ծանոթ. *Թվականի այս ընդհանրացած վերծանությունը չի համապատասխանում պատմական փաստերին. այսպես՝ Մելիք Եղանը (բուն անունը Ալլան) Լոռիից փոխադրված և Տող գյուղում հաստատված է համարվում 1716 թ. և մահացել է 1744 թվականին։*

*Նկատի պետի ունենալ հետևյալ հանգամանքը. արձանագիր գրիչները հաճախ Ժ և Ծ տառերը գրում են իրար շատ նման ոճով, որը և շփոթության տեղիք է տալիս։ Թվում է, որ ներկա դեպքում թվականի մեջ տասնավոր Ժ-ն պետք է Ծ վերծանել, որով կստացվի 1707 թվականը։ Այս դեպքում նաև Մելիք Եգանի Տող տեղափոխվելու ժամանակը մոտ 10 տարով կհնտնա։*

*Հրատ. Բարխուդարեանց, 76—77։*

## 64. ԳՏՉԱ ԲԵՐԴ ԵՎ ԳՏՉԱ ՎԱՆՔ

*Հուշարձանների այս խումբը գտնվում է հնագույն մյաս Հարանդ, հետագայում Դիզակ գավառի և այժմյան Հադրութի շրջանի Տող, Տումի և Թաղլար գյուղերի արանքում առանձնակի բարձրացող բարձր սարի գագաթին։ Լեռան և վանքի անունները գրվել են տոնազան ձևերով, հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում՝ մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տողի բերդ։*

*Ամբողջովին անտառապատ լեռան գագաթին մնում են բերդի պարիսպների ավերակները, դիմացը փորված խոր խրամը և ներսում մեծ թվով տնատեղեր։*

*Քթիշ բերդը Արցախի հնագույն և ամրագույն բերդերից մեկն է, նրա պատերի տակ նշանավոր դեպքեր են տեղի ունեցել։ Հիշենք մեկը. IX դարում արաբացոց Բուղա ոստիկանը պաշարում է այստեղ ամրացած անհնազանդ հայոց Ապումուսէ կամ Եսայի Ապումուսէ իշխանին։ Պաշարումը և պատերազմը տևում են ամիսներ, արաբացոց զորքը մեծամեծ կորուստներ է կրում, բայց չի կարողանում կոտրել պաշարված զորքի և ժողովրդի դիմադրությունը և հարկադրված է լինում, ի վերջո, հաշտության առաջարկել*[1]*։*

*Լեռնագագաթում եղած հուշարձաններից արձանագրություններ ունեն հետևյալ երկուսը.*

Ա. Գտչա վանք. *գտնվում է բերդից հյուսիս, մի հարթ բացատում։ Գրականության մեջ բացի վերոհիշյալ անուններից, կոչվել է նաև* Թիլեա վանք. *բաղկացած է մի գմբեթավոր եկեղեցուց և գավթից. երկու շենքերն էլ կառուցված են համակ սրբատաշ քարերով և արվեստավոր վարպետի ձեռքով։ Արցախի հայ ճարտարապետական լավագույն հուշարձաններից մեկն է։*

[1] *«Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 289—301։*